

ք. Գավառ

«04» հունիսի 2014թ.

«Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունն՝ ի դեմս ռեկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի և «Էջմիածնի Վարդգես Համագասայանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Սերգեյ Արամայիսի Զաքարյանի (այսուհետ՝ Կողմեր), համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգը հաստատելու մասին» N 589 որոշումը՝ կնքում են սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. «Էջմիածնի Վարդգես Համագասայանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են ուսումը շարունակել Գավառի պետական համալսարանում համապատասխան մասնագիտությունների գծով, և՛ առկա և՛ հեռակա ուսուցման ֆակուլտետներում:

2. Կողմերը համաձայնվում են՝

2.1. Գավառի պետական համալսարանում իրականացնել բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր այն մասնագիտություններով, որոնց գծով թույլատրվում է միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթության շարունակումը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2.2. Համագործակցել՝ համապատասխան մասնագիտությունների գծով ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և բարելավման նպատակներով:

3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4. Պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները և ստորագրությունները.

«Գավառի պետական համալսարան»

ՊՈԱԿ

«Էջմիածնի Վարդգես Համագասայանի

անվան պետական քոլեջ»

ՊՈԱԿ

ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1

Էլ. փոստ՝ info@gsu.am

www.gsu.am

Fax: +374 060 46 02 01

հեռ. +374 060 46 02 01, +374 060 46 03 02

Հայաստան, Արմավիրի մարզ,

Էջմիածին,

Մանուկ Կորենացի 1

Էլ. փոստ՝ evhpq@mail.ru

հեռ. +374 231-52016

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Տնօրեն՝

Մ. Ա. Զաքարյան

